ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/25

ք. Երեւան «03» 04 2020թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է միջոցառումների հետ կապված ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **15,270,000** (տասնհինգ միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են

պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	**«ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ**
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 2	ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 29
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 900011032704	Հ/Հ 2050022238291001
ՀՎՀՀ 02698732	**ՀՎՀՀ 04112197**
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	Տնօրեն՝
_____ Վ. Գասպարյան	_____ Ռ. Վարդանյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«03» 04 2020թ. կնքված
N ՀՀԿԳՄՄՆԳՀԾՁԲ-20/25 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Չափա-բաժին	Գումների պլանով նախատես-ված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV)	Ծառայության						
		Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը, ՀՀ դրամ	Ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատուցման ժամկետը
1	79951100/1	Միջոցառում-ների հետ կապված ծառայություն ներ	**Ծառայությունը նախատեսում է ««ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմակերպում, քաղաքում միջոցառումների իրականացում» միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) կազմակերպում:** Միջոցառման նպատակն է նպաստել մարզերում երիտասարդական նախաձեռնությունների խթանմանը, երիտասարդական քաղաքականության ոլորտում քաղաքների միջև գործընկերային հարաբերությունների, ինչպես նաև մարզերում երիտասարդական կազմակերպությունների և ենթակառույցների զարգացմանը: Միջոցառումն իրականացվելու է հետևյալ փուլերով՝ **1. 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաքի (այսուհետ՝ Մայրաքաղաք) բացման արարողություն,** **2. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաք մրցույթի կազմակերպում,** **3. «Սպորտլանդիա» քաղաքային նշանակության միկրոծրագիր,** **4. «Ուսանողական ամառ փառատոն» մարզային նշանակության միկրոծրագիր,** **5. «Ինտելեկտուալ խաղ-մրցույթ» հանրապետական նշանակության միկրոծրագիր,** **6. Մայրաքաղաքի փակման արարողություն:** Միջոցառման փուլերի անցկացումը նախատեսվում է իրականացնել ներքոնշված չափանիշներին* համապատասխան:	դրամ	1	15,270,000	15,270,000	Ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում, մինչև 2020 թվականի դեկտեմբերի 5ը:
Միջոցառման փուլերի անցկացման չափանիշներ								

1. Մայրաքաղաքի բացման արարողություն (Օրը համաձայնացնել երիտասարդական քաղաքականության վարչության (այսուհետ՝ ԵՔ վարչություն) հետ):

Մայրաքաղաքի բացման արարողությունը կիրականացվի Կապան քաղաքում:

Միջոցառման շրջանակներում Կապանի մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում տեղի կունենա Մայրաքաղաքի բացման արարողությունը, որին կմասնակցեն «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմկոմիտեի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի փորձագիտական հանձնաժողովի անդամները (ընդհանուր 16 մարդ), Կապանի երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ ու երիտասարդներ, ինչպես նաև հյուրեր նախորդ տարիների երիտասարդական մայրաքաղաքներից: Ողջույնի խոսքով հանդես կգան երիտասարդական քաղաքականության ոլորտի պատասխանատուները, Կապան համայնքի ղեկավարը: Երիտասարդական քաղաքականության ոլորտի պատասխանատուն Կապան համայնքի ղեկավարին կհանձնի Կապանը 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք հռչակվելու մասին հավաստագիրը: Որից հետո իրենց համերգային համարներով կներկայանան Կապանի մշակութային խմբերը (ընդհանուր 30 րոպե տևողությամբ): Այս ամենին կհաջորդի 40 րոպե տևողությամբ ռոք կամ էստրադային համերգային ծրագիրը: Մայրաքաղաքի բացման արարողության բոլոր մասնակիցներին կբաժանվեն համապատասխան պատկերանշանով գովազդային նյութեր (կրծքանշան՝ շրջագծված ՀՀ դրոշի գույներով ժապավենով, փուչիկ՝ ձողով, դրոշակ): Միջոցառման ավարտից հետո սոցիալական ցանցերով կտարածվի 1-2 րոպե տևողությամբ հաշվետու տեսաֆիլմ, որը ամփոփ կներկայացնի Մայրաքաղաքի բացման արարողությունը:

Մայրաքաղաքի բացման արարողության կազմակերպման շրջանակներում Ծառայություն մատուցող կազմակերպությունը ապահովելու է՝

1.1 Կապանում տարբեր տեսարժան վայրերում փակցնելու նպատակով 8 հատ պաստառի դիզայնն ու տպագրությունը (յուրաքանչյուր պաստառի չափը 3մx6մ): Պաստառների դիզայնը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ: Տպագրված պաստառները պետք է հանձնել Կապանի համայնքապետարանին: Պաստառների հանձնելու օրը պետք է համաձայնեցնել ԵՔ վարչության հետ: Պաստառների տեղադրման վայրը և տեղադրումն ապահովելու է Կապանի համայնքապետարանը:

1.2 Մայրաքաղաքի բացման արարողության հյուրերի տեղափոխումը Երևանից Կապան և հետ (ընդհանուր 16 մարդ) (ուղևորափոխադրման կոնկրետ օրը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ)

Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, նոր անվադողերով, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, օդափոխիչ և այլն):

Հյուրերի կոնտակտները Ծառայություն մատուցող կազմակերպությանը կտրամադրվի ԵՔ վարչության կողմից:

1.3 Մայրաքաղաքի բացման արարողության հյուրերի կեցությունն ու սնունդը Կապանում (ընդհանուր 16 մարդ) (կոնկրետ օրը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ)

Հյուրանոց Կապանում՝ հյուրերի (ընդհանուր 16 մարդ) համար (մեկտեղանոց՝ մեկ մահճակալով տաքացվող համարներում), 1 գիշերակաց և 1 օր սննդի ապահովման ծառայության ձեռք բերում (1-ին օրը ճաշ և ընթրիք, 2-րդ օրը նախաճաշ):

Սնունդը՝ նախաճաշ (կարագ, պանիր, հաց, ջեմ, հիմնական ուտեստ (նրբերշիկ, պյուրե կամ ձվածեղ կամ խաշած ձու), թեյ, սուրճ), ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք), ընթրիք (հաց, 2 տեսակի աղցան, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ, սուրճ):

1.4 Համապատասխան պատկերանշանով գովազդային նյութեր (կրծքանշան՝ շրջագծված ՀՀ դրոշի գույներով ժապավենով, փուչիկ ձողով, դրոշակ):

Կրծքանշան՝ շրջագծված ՀՀ դրոշի գույներով ժապավենով - 750 հատ: Պլաստմասե միջին չափի կրծքանշան, վրան տպագրված Մայրաքաղաքի լոգոն և «Կապան-2020 Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք» բառերը, եզրը շրջագծված եռագույն ժապավենով: Դիզայնը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:

Փուչիկ՝ ձողով - 750 հատ, որից.

250 հատ սպիտակ ձողով բաց կարմիր փուչիկներ, փուչիկների վրան տպագրված Մայրաքաղաքի լոգոն և «Կապան-2020 Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք» բառերը,

250 հատ սպիտակ ձողով բաց կապույտ փուչիկներ, փուչիկների վրա տպագրված Մայրաքաղաքի լոգոն և «Կապան-2020 Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք» բառերը,

250 հատ սպիտակ ձողով բաց դեղին փուչիկներ, փուչիկների վրան տպագրված Մայրաքաղաքի լոգոն և «Կապան-2020 Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք» բառերը:

Դրոշակ -750 հատ: Համապատասխան ձողով փոքրիկ դրոշակներ: Դրոշակները թղթե, վրան տպագրված Մայրաքաղաքի լոգոն և «Կապան-2020 Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք» բառերը: Ձողը պլաստմասե կամ փայտից (դիզայնը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ): Ծառայություն մատուցող կազմակերպությունը կրծքանշանները, փչած փուչիկները և դրոշակները միջոցառման օրը բաժանելու է դահլիճ մտնողներին:

1.5 Հավաստագիր. Հավաստագրի չափը A4, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ, փայտե շրջանակով: Տպագրման համար անհրաժեշտ տեքստը կտրամադրվի ԵՔ վարչության կողմից: Դիզայնը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:

1.6 Համերգային ծրագիր

Համերգային ծրագրի կազմակերպում 40 րոպե տևողությամբ՝ էստրադային կամ ռոք խմբերի ընդգրկմամբ՝ հաղորդավարի առկայությամբ: Համերգային խմբի ընտրությունը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ: Համերգային ծրագրի մեկնարկից առաջ կլինի միջոցառման պաշտոնական հատվածը, որի սցենարը համաձայնեցնել ԵՔ վարչության և Կապանի համայնքապետարանի հետ:

1.7 Լուսային համակարգ համերգի համար՝

- շարժական լույս BEAM R7 230WATT (կամ համարժեք) - 10 հատ,
- շարժական լույս LED WASH RGBW 30x12 WATT (կամ համարժեք) - 6 հատ,
- ստատիկ լույս LED PAR RGBW 54x3 WATT (կամ համարժեք) - 4 հատ,
- թարթող լույսեր STROB 2000 WATT (կամ համարժեք) – 1 հատ,
- ստատիկ լույս PAR 64 (կամ համարժեք) - 4 հատ

1.8 Ձայնային սարքավորումների համակարգ համերգի համար: Ձայնային տեխնիկան պետք է համապատասխանի Կապանի մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում էստրադային կամ ռոք խմբին անհրաժեշտ պարամետրերին

1.9 Մետաղական կոնստրուկցիա - 1 հատ (12մ x 10մ x 7մ):

2. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաք մրցույթի կազմակերպում (օրը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ):

<< 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաքի մրցույթի անցկացման նպատակով << կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) համաձայն «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ (Կցվում է)) սահմանված պայմանների՝ հայտարարել է << 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաքի մրցույթ: Հայտարարությամբ սահմանված ժամկետում քաղաքները իրենց մրցութային հայտերը ներկայացրել են Նախարարություն: Որից հետո սկսվելու է հայտերի գնահատման գործընթացը: Միջոցառման շրջանակներում Կանոնակարգի համաձայն կիրականացվի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի փորձագիտական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) այցելությունները «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի հայտատու քաղաքներ՝ տեղերում ուսումնասիրությունների արդյունքում հայտերի փորձագիտական գնահատման նպատակով: «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթին մասնակցելու համար հայտ են ներկայացրել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան, Հայաստանի Հաանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի քաղաքները:

Ծառայություն մատուցող կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաք մրցույթի հայտատու քաղաքներ այցելության կազմակերպման շրջանակներում ապահովելու է՝

2.1 «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար թեկնածուների առկայությունը: Ծառայություն մատուցող կազմակերպության կողմից ներկայացված Հանձնաժողովի առնվազն 15 անդամների թեկնածուների հայտերում պետք է առկա լինի տեղեկատվություն երիտասարդական քաղաքականության ոլորտում նրանց իրականացրած փորձագիտական գործունեության, հասարակական ակտիվության վերաբերյալ, անձնագրի պատճենը, ինքնակենսագրությունը, ինչպես նաև մոտիվացիոն նամակը: Հանձնաժողովի կազմում չեն կարող ընդգրկվել «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի հայտատու քաղաքներում (Հրազդան, Եղեգնաձոր և Ալավերդի) գործունեություն ծավալող և մշտական գրանցում ունեցող թեկնածուները: Կազմկոմիտեն Ծառայություն մատուցող կազմակերպության կողմից ներկայացված հայտերից կընտրի Հանձնաժողովի կազմը, որը պետք է կազմված լինի 10 անդամներից: Հանձնաժողովը առաջնորդվելով Կանոնակարգով՝ իրականացնում է մրցութային հայտերի փորձագիտական գնահատումը:

2.2 Հանձնաժողովի գործունեությունը.

2.3 Հանձնաժողովի 10 անդամների ուղևորափոխադրումը «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի հայտատու քաղաքներ՝ Հրազդան, Եղեգնաձոր, Ալավերդի և հետադարձ : Հայտատու քաղաքներ այցելությունների ամիսն ու օրերն անհրաժեշտ է համաձայնեցնել ԵՔ վարչութաան հետ: Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, նոր անվադողերով, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, օդափոխիչ և այլն):

2.4 Հանձնաժողովի (10 անդամ) անդամների կեցությունը Եղեգնաձոր և Ալավերդի քաղաքներում, ինչպես նաև սննդի ապահովումը Հրազդան, Եղեգնաձոր և Ալավերդի քաղաքներում:

Հյուրանոց Եղեգնաձորում հանձնաժողովի 10 անդամենրի համար (մեկտեղանոց՝ մեկ մահճակալով տաքացվող համարներում), 1 գիշերակաց և 1 օր սննդի ապահովման ծառայության ձեռք բերում (1-ին օրը ճաշ և ընթրիք, 2-րդ օրը նախաճաշ):

Սնունդ Եղեգնաձորում՝ նախաճաշ (կարագ, պանիր, հաց, ջեմ, հիմնական ուտեստ (նրբերշիկ, պյուրե կամ ձվածեղ կամ խաշած ձու), թեյ, սուրճ), ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք), ընթրիք (հաց, 2 տեսակի աղցան, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ, սուրճ):

Հյուրանոց Ալավերդիում հանձնաժողովի 10 անդամենրի համար (մեկտեղանոց՝ մեկ մահճակալով տաքացվող համարներում), 1 գիշերակաց և 1 օր սննդի ապահովման ծառայության ձեռք բերում (1-ին օրը ճաշ և ընթրիք, 2-րդ օրը նախաճաշ):

Սնունդ Ալավերդիում՝ նախաճաշ (կարագ, պանիր, հաց, ջեմ, հիմնական ուտեստ (նրբերշիկ, պյուրե կամ ձվածեղ կամ խաշած ձու), թեյ, սուրճ), ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք), ընթրիք (հաց, 2 տեսակի աղցան, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ, սուրճ):

Սնունդ Հրազդանում՝ հանձնաժողովի 10 անդամների համար, ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր կամ հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք, քաղցրավենիք երկու տեսակի, սուրճ, թեյ):

2.5 Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաքի հռչակման նպատակով (միջոցառման օրը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ) 20 օր տևողությամբ կարճ հաղորդագրությամբ (SMS) քվեարկությունը: Քվերակությունը հնարավորություն կտա հանրությանը, հատկապես երիտասարդներին, իրենց ձայնի միջոցով նպաստելու Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաքի ընտրությանը: Ծառայություն մատուցող կազմակերպությունը կարճ հաղորդագրությամբ (SMS) քվեարկությունը մեկնարկելու վերաբերյալ տեղեկատվությունը անմիջապես, իսկ քվեարկության արդյունքում ստացված ձայների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը քվեարկության ավարտից հետո հաջորդ օրը պետք է ներկայացնի ԵՔ վարչությանը: Մեկ SMS քվեարկության արժեքը չի կարող գերազանցել 50 դրամը:

2.6 «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կարճ հաղորդագրությամբ (SMS) քվեարկության մասին տեսահոլովակի պատրաստում (ժամկետները համաձայնեցնել ԵՔ վարչության հետ): Ծառայություն մատուցող կազմակերպությունը կպատրաստվի Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաքի մրցույթի, կարճ հաղորդագրությամբ (SMS) քվեարկության մասին պատմող տեսահոլովակը, և այն 20 օր տևողությամբ կտարածի առցանց հարթակներով:Տեսահոլովակը պետք է պատրաստվի անիմացիոն և գրաֆիկական լուծումներով, նկարահանվի 4K ֆորմատով և ներկայացնի 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաք մրցույթին դիմած քաղաքների և կարճ հաղորդագրությամբ (SMS) քվեարկության մասին տեղեկատվությունը: Տևողությունը կլինի 20-30 վայրկյան: Տեսահոլովակը կոմերցիոն բնույթ չի կրի:

2.7 Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաքի հռչակման մասին տեսահոլովակի պատրաստում: ՀՀ 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաքի մրցույթի արդյունքների ամփոփումից հետո 10 օրվա ընթացքում Ծառայություն մատուցող կազմակերպությունը կպատրաստի Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաքի հռչակման մասին պատմող տեսահոլովակը և այն կտարածի առցանց հարթակներով: Տեսահոլովակը պետք է պատրաստվի անիմացիոն և գրաֆիկական լուծումներով, նկարահանվի 4K ֆորմատով և ներկայացնի Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաքի, քաղաքի երիտասարդության մասին տեղեկատվությունը: Տևողությունը կլինի 20-30 վայրկյան: Տեսահոլովակը կոմերցիոն բնույթ չի կրի:

3. «Սպորտլանդիա» քաղաքային նշանակության միկրոծրագիր (այսուհետ՝ Քաղաքային նշանակության միկրոծրագիր)

Իրականացվելու է մայիս-հունիս ամիսների ընթացքում (օրը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ):

Քաղաքային նշանակության միկրոծրագրի նպատակն է երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի արմատավորումը, ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակումը, երիտասարդների շրջանում ֆիզիկական պատրաստվածության բարելավումը, աշխատունակության բարձրացումը, առողջության ամրապնդումն ու մարզական մասսայական միջոցառումներին երիտասարդների ներգրավումը: Մրցույթին կներգրավվեն Կապան քաղաքի բոլոր թաղամասերը: Այնուհետև լավագույները կմրցեն եզրափակիչ փուլում:

Ծառայություն մատուցող կազմակերպությունը Քաղաքային նշանակության միկրոծրագրի շրջանակներում ապահովելու է՝

55 հատ մարզահագուստ, որից.

11 հատ - կիսասինթետիկ հումքից, շապիկը կարմիր՝ եզրագծված սև և սպիտակ գծերով, տաբատը սև (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով), չափսերը՝ S կամ M կամ L:

11 հատ - կիսասինթետիկ հումքից, շապիկը կապույտ՝ եզրագծված սև և սպիտակ գծերով, տաբատը սև (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով), չափսերը՝ S կամ M կամ L:

11 հատ - կիսասինթետիկ հումքից, շապիկը դեղին՝ եզրագծված սև և սպիտակ գծերով, տաբատը սև (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով), չափսերը՝ S կամ M կամ L:

11 հատ - կիսասինթետիկ հումքից, շապիկը սպիտակ՝ եզրագծված սև և սպիտակ գծերով, տաբատը սև (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով), չափսերը՝ S կամ M կամ L:

11 հատ - կիսասինթետիկ հումքից, շապիկը սև՝ եզրագծված սև և սպիտակ գծերով, տաբատը սև (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով), չափսերը՝ S կամ M կամ L:

Մարզահագուստները պետք է հանձնել Կապանի համայնքապետարանին:

4. «Ուսանողական ամառ փառատոն» մարզային նշանակության միկրոծրագիր (այսուհետ՝ Մարզային նշանակության միկրոծրագիր)

Իրականացվելու է հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում (օրը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ):

Ծրագրի նպատակն է համախմբել երիտասարդությանը, հայտնաբերել տաղանդավոր ինքնատիպ և խելացի երիտասարդների, որոնք իրենց կարողությամբ կմասնակցեն համայնքի հասարակական և քաղաքական կյանքին:

Ծառայություն մատուցող կազմակերպությունը ապահովելու է՝

Մարզային նշանակության միկրոծրագրի մասնակիցների տեղափոխումը ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան, Գորիս, Ագարակ համայնքներից Կապան և հետ (ընդհանուր 25 մարդ) և ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի և Քաջարան համայնքներից Կապան և հետ (ընդհանուր 25 մարդ) Ուղևորափոխադրման կոնկրետ օրը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ: Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, նոր անվադողերով, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, օդափոխիչ և այլն):

5. «Ինտելեկտուալ խաղ-մրցույթ» հանրապետական նշանակության միկրոծրագիր (այսուհետ՝ Հանրապետական նշանակության միկրոծրագիր)

Իրականացվելու է հոկտեմբեր ամսին (օրը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ)

Հանրապետական նշանակության միկրոծրագրի շրջանակներում կազմակերպվելու է ինտելեկտուալ խաղ-մրցույթ, որի նպատակն է երիտասարդների մտավոր ունակությունների զարգացումը, շնորհալի և տաղանդավոր անձանց հայտնաբերումը և գիտելիքների քարոզումը:

Ծառայություն մատուցող կազմակերպությունը Հանրապետական նշանակության միկրոծրագրի շրջանակներում ապահովելու է՝

5.1 Հանրապետական նշանակության միկրոծրագրի մասնակիցների տեղափոխումը Վանաձոր, Գյումրի, Սիսիան, Իջևան, Ստեփանավան և Չարենցավան համայնքներից Կապան և հետ: Վանաձոր-Կապան, Կապան-Վանաձոր (ընդհանուր 6 մարդ), Գյումրի-Կապան, Կապան-Գյումրի (ընդհանուր 6 մարդ), Սիսիան-Կապան, Կապան-Սիսիան (ընդհանուր 6 մարդ), Իջևան-Կապան, Կապան-Իջևան (ընդհանուր 6 մարդ), Ստեփանավան-Կապան, Կապան-Ստեփանավան (ընդհանուր 6 մարդ), Չարենցավան-Կապան, Կապան-Չարենցավան (ընդհանուր 6 մարդ) (ուղևորափոխադրման կոնկրետ օրերը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ): Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, նոր անվադողերով, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, օդափոխիչ և այլն):

5.2 Հանրապետական նշանակության միկրոծրագրի մասնակիցների կեցությունն ու սնունդը Կապան քաղաքում (ընդհանուր 30 մարդ):

Հյուրանոց Կապանում՝ 30 մասնակիցների համար՝(մեկտեղանոց՝ մեկ մահճակալով տաքացվող համարներում), 1 գիշերակաց և 1 օր սննդի ապահովման ծառայության ձեռք բերում (1-ին օրը ճաշ և ընթրիք, 2-րդ օրը նախաճաշ):

Սնունդը՝ նախաճաշ (կարագ, պանիր, հաց, ջեմ, հիմնական ուտեստ (նրբերշիկ, պյուրե կամ ձվածեղ կամ խաշած ձու), թեյ, սուրճ), ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք), ընթրիք (հաց, 2 տեսակի աղցան, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ, սուրճ):

6. Մայրաքաղաքի փակման արարողություն:

Իրականացվելու է նոյեմբերի 10-20-ն ընկած ժամանակահատվածում Կապանում քաղաքում:

2020 թվականի նոյեմբերի 10-20-ն ընկած ժամանակահատվածում Կապանի մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում տեղի կունենա Մայրաքաղաքի փակման արարողությունը, որին կմասնակցեն Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաք հռչակված քաղաքի պատվիրակությունը, Կապանի երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ ու երիտասարդներ, ինչպես նաև հյուրեր Երևանից («Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի Կազմկոմիտեի և Հանձնաժողովի անդամները: Ընդհանուր 17 մարդ): Ողջույնի խոսքով հանդես կգան երիտասարդական քաղաքականության ոլորտի պատասխանատուները, Կապան համայնքի ղեկավարը: Կապան համայքի ղեկավարը երիտասարդական մայրաքաղաքի բանալին պաշտոնապես կհանձնի Հայաստանի Հանրապետության 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաք հռչակված համայնքի ղեկավարին, որից հետո երիտասարդական քաղաքականության ոլորտի պատասխանատուները շնորհակալագրեր կհանձնեն 2020 թվականի ընթացքում իրենց լավագույնս դրսևորած կապանցի երիտասարդներին, երիտասարդական հասարակական կազմակերպություններին: Մայրաքաղաքի փակման արարողության բոլոր մասնակիցներին կբաժանվեն ամփոփիչ սկավառակներ, որոնցում համառոտ կներկայացվեն բոլոր այն միջոցառումներն ու ծրագրերը, որոնք 2020 թվականին իրականացվել են Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաքում: Այս ամենին կհաջորդի 60 րոպե տևողությամբ ջազ կամ էստրադային համերգային ծրագիրը: Միջոցառման ավարտից հետո սոցիալական ցանցերով կտարածվի 1-2 րոպե տևողությամբ հաշվետու տեսաֆիլմ, որը ամփոփ կներկայացնի Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաքի փակման արարողությունը:

Մայրաքաղաքի փակման արարողության կազմակերպման շրջանակներում Ծառայություն մատուցող կազմակերպությունը ապահովելու է՝

6.1 Մայրաքաղաքի փակման արարողության հյուրերի տեղափոխումը Երևանից Կապան և հետ (ընդհանուր 17 մարդ) (2020 թվականի նոյեմբերի 10-20-ն ընկած ժամանակահատվածում, ուղևորափոխադրման կոնկրետ օրը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ)

Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, նոր անվադողերով, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, օդափոխիչ և այլն): Հյուրերի կոնտակտները Ծառայություն մատուցող կազմակերպությանը կտրամադրվի ԵՔ վարչության կողմից

6.2 Մայրաքաղաքի փակման արարողութաան հյուրերի կեցությունն ու սնունդը Կապանում (ընդհանուր 17 մարդ) (կոնկրետ օրը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ)

Հյուրանոց Կապանում՝ Հյուրերի (ընդհանուր 17 մարդ) համար (մեկտեղանոց՝ մեկ մահճակալով տաքացվող համարներում), 1 գիշերակաց և 1 օր սննդի ապահովման ծառայության ձեռք բերում (1-ին օրը ճաշ և ընթրիք, 2-րդ օրը նախաճաշ):

Սնունդը՝ նախաճաշ (կարագ, պանիր, հաց, ջեմ, հիմնական ուտեստ (նրբերշիկ, պյուրե կամ ձվածեղ կամ խաշած ձու), թեյ, սուրճ), ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք), ընթրիք (հաց, 2 տեսակի աղցան, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ, սուրճ):

6.3 Համապատասխան պատկերանշանով գովազդային նյութեր (կրծքանշան՝ շրջագծված ՀՀ դրոշի գույներով ժապավենով, փուչիկ ձողով, դրոշակ): Կրծքանշան՝ շրջագծված ՀՀ դրոշի գույներով ժապավենով - 750 հատ: Պլաստմասե միջին չափի կրծքանշան, վրան տպագրված Մայրաքաղաքի լոգոն և «Կապան-2020 Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք» բառերը, եզրը շրջագծված եռագույն ժապավենով: Դիզայնը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:

Փուչիկ՝ ձողով - 750 հատ, որից.

250 հատ սպիտակ ձողով բաց կարմիր փուչիկներ, փուչիկների վրան տպագրված Մայրաքաղաքի լոգոն և «Կապան-2020 Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք» բառերը,

250 հատ սպիտակ ձողով բաց կապույտ փուչիկներ, փուչիկների վրա տպագրված Մայրաքաղաքի լոգոն և «Կապան-2020 Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք» բառերը,

250 հատ սպիտակ ձողով բաց դեղին փուչիկներ, փուչիկների վրան տպագրված Մայրաքաղաքի լոգոն և «Կապան-2020 Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք» բառերը:

Դրոշակ- 750 հատ: Համապատասխան ձողով փոքրիկ դրոշակներ: Դրոշակները թղթե, վրան տպագրված Մայրաքաղաքի լոգոն և «Կապան-2020 Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք» բառերը: Ձողը պլաստմասե կամ փայտից (դիզայնը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ):

Ծառայություն մատուցող կազմակերպությունը կրծքանշանները, փչած փուչիկները և դրոշակները միջոցառման օրը բաժանելու է դահլիճ մտնողներին:

6.4 Մայրաքաղաքում իրականացված ծրագրերի վերաբերյալ ամփոփիչ սկավառակի պատրաստումը

Ամփոփիչ սկավառակ - 750 հատ: Սկավառակներում համառոտ կներկայացվի տեղեկատվություն բոլոր այն միջոցառումների և ծրագրերի վերաբերյալ, որոնք 2020 թվականին Նախարարության ֆինանսավորմամբ իրականացվել են երիտասարդական մայրաքաղաքում: Ծառայություն մատուցող կազմակերպությունը ապահովելու է ամփոփիչ սկավառակում պարունակվող տեղեկատվության մշակումը և դիզայնը: Անհրաժեշտ տեղեկատվությունը և լուսանկարները կտրակադրվեն ԵՔ վարչության կողմից: Ծառայություն մատուցող կազմակերպությունը ամփոփիչ սկավառակները միջոցառման օրը բաժանելու է դահլիճ մտնողներին:

6.5 Համերգային ծրագիր

Համերգային ծրագրի կազմակերպում 60 րոպե տևողությամբ՝ էստրադային կամ ռոք խմբերի ընդգրկմամբ՝ հաղորդավարի առկայությամբ: Համերգային խմբի ընտրությունը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:

6.5.1 Լուսային համակարգ համերգի համար՝

- շարժական լույս BEAM R7 230WATT (կամ համարժեք) - 10 հատ,
- շարժական լույս LED WASH RGBW 30x12 WATT (կամ համարժեք) - 6 հատ,
- ստատիկ լույս LED PAR RGBW 54x3 WATT (կամ համարժեք) - 4 հատ,
- թարթող լույսեր STROB 2000 WATT (կամ համարժեք) – 1 հատ,
- ստատիկ լույս PAR 64 (կամ համարժեք) - 4 հատ

6.5.2 Ձայնային սարքավորումների համակարգ համերգի համար:

Ձայնային տեխնիկան պետք է համապատասխանի Կապանի մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում էստրադային կամ ռոք խմբին անհրաժեշտ պարամետրերին:

6.5.3 Մետաղական կոնստրուկցիա - 1 հատ (12մ x 10մ x 7մ):

6.6 Շնորհակալագրեր

15 հատ շնորհակալագրեր, չափսը A4, փայտյա շրջանակով: Տպագրման համար անհրաժեշտ տեքստը կտրամադրի ԵՔ վարչությունը: Դիզայնը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:

6.7 Հաշվետու տեսահոլովակ

Մինչև 2020 թվականի դեկտեմբերի 5-ը 1-2 րոպե տևողությամբ տեսահոլովակի պատրաստում և տարածում սոցիալական ցանցերով: Տեսահոլովակը ամփոփ կներկայացնի Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաքի փակման արարողությունը: Ծառայություն մատուցող կազմակերպությունը ապահովելու է տեսահոլովակի նկարահանումը, մոնտաժումը և սոցիալական ցանցերով տարածումը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ. Գասպարյան
(ստորագրություն)

Կ.Տ
02698732

ԿԱՏԱՐՈՂ

Ռ. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ

«ԻԷՍԱՅԻ»
"ESIC"
04112197

Հավելված N 2
«03» 04 2020թ. կնքված
N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/25 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայություն															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79951100/1	միջոցառումների հետ կապված ծառայություններ	0	0	0	4,733,700	5,955,300	6,871,500	7,940,400	8,856,600	12,979,500	13,895,700	15,270,000	15,270,000	**15,270,000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

_____Ռ. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ